եգիտ զնոսա ի Լիչքին, որ է յայնկոյս ղօղղօղ գետոյն։ Իսկ Թուրքն բանակեալ էր ի Լչկին. իբրեւ տեսին զոսա, ելին արտաքս և եկին ի գողթ, որ է ի գետափն և ոչ ետուն անցանել զգետն, և սոքա աստի, և նոքա անտի մարտ եդեալ կռուէին յառաւօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի գալն նոցա ի ջիպանդ ի գլուխն դաշտուն։ Եւ ի գիշերի տաւութ պէկն էանց ի հալին ձորն։

վասն այսր ամենայնի։ Եւ նա վաղվաղակի առեալ ընդ իւր արս իբրեւ չորս հազարս՝ եկն և բանակեցաւ ի կալեր, և ի յառաւօտուն պահու եհաս ի վրայ հինիցն Թուրքաց, և եգիտ զնոսա բանակեալս ի Լիջկին յայնկոյս ղօղղօղ գետոյն։ Իսկ նոքա անտի իբրեւ տեսին զզօրսն Դաւթի առհասարակ հասին կալան զգետափն, և ոչ տային թոյլ անցանել Դաւթի զգետն. ապա սոքա աստի, և նոքա անտի մարտ եդեալ կռուէին յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, և իբրեւ եհաս գիշերն խոյս ետ Դաւիթ, և չուեաց գնաց անտի ի հալիձոր։

և ոչ ետուն նոցա թոյլ անցանել ընդ գետն։ Ապա մարտ եդեալ ընդ միմեանս՝ սոքա աստի, և նոքա անտի՝ յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, անկան յերկուց կողմանց բազումք. և առաւել եւս ի հայոց։ Եւ իբրեւ գիշերն ի վրայ եհաս, խոյս ետ Դաւիթ ի տեղւոջէ անտի. զի պակասեցան զօրք իւր. և գնաց ի հալիձոր։

Իսկ մխիթարն փախուցեալ ի նոցանէ գնաց վերստին զօրս գումարեալ ի հայոց, և ի թուրքաց, վերստին խորտակեաց զօսմանցին, և դարձոյց յետս զքաղաքն, և զամուրս ի նոցանէ։ Էառ և զուրդուար քաղաքն և կոտորեաց զամենայն որ ինչ էր ի նմա, և էառ զաւար բազում յոյժ, և զհարիւր վաթսուն բեռինս ուղտուց։ Եւ ինքն դարձ արարեալ անտի եկեալ ժամանակ ինչ բնակեցաւ ի յամուրն խնձորէկս, և անդ իւրոց զօրացն հարեալ թօփով սպանին. և վաղվաղակի հայոցն հատեալ զգլուխ նորա տարին առ փաշայն թավրիզու, և նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հատանելով զգլուխ անզգամացն, և ասէ զիարդ իշխեցիք զայդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց։

Այլ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ երթայր վերստին զօրաժողով լինէր ի հայոց և ի թուրքաց, զզօրսն օսմանցւոցն խորտակէր, և առնոյր զվրէժ ի նոցանէ՝ զբազում ամուրս, և զքաղաքս ի նոցանէ թափէր, և երթայր զուրդուար քաղաք պաշարէր, և իբրեւ զբռամբ ածէր զայն ի նոցանէ, զամենեսեան ի սուր սուսերի սատակէր, և զաւար բազում առնոյր ի նոցանէ, և զհարիւր վաթսուն բեռինս ուղտուց։ Եւ անտի դարձ առնէր, և երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն խնձորէկս բնակէր. և անդ յիւրոցն հարեալ թօփով մեռանէր յամի տեառն 1730. յետ երկուց ամաց իշխելոյն. զի նա յօրէ յորմէ հետէ ի խնձորէկս բնակէր, առէին ցնա հայ բնակիչքն, ել գնա՛ աստի ի յամուրն քո. և նա ոչ լսէր նոցա. ուստի յաւուր միում հարին զնա ի պարսպէն և սպանին, և հատեալ զգլուխ նորա առին գնացին ի թավրէզ առ փաշայն օսմանցւոց. իսկ նա իբրեւ ետես զայն զարմացաւ յոյժ. և ի սրտմտութիւն բարկութեան բրդեցաւ ի վերայ այնպիսւոյ անզգամութեան նոցա, և ասէ ո՞վ անօրէնք, և ամբարիշտք. զի՞արդ իշխեցիք ի զուր տարապարտուց սպանանել զտէրն ձեր, և զայդպիսի քաջ այր. և հրամայեաց հատանել զգլուխս ամենեցուն նոցա, որք տարան զայն, և ըստ արժանեացն հատոյց զհատուցումն նոցա։

Զայն իբրեւ գիտաց Մխիթար, ի նմին գիշերի կախեալ ընդ պարիսպն՝ փախեաւ գաղտ… Վերստին գումարեալ առ ինքն զարս ամենհի և զօրաւորս՝ յարձակեցաւ ի քաղաքս թշնամեաց իւրոց. և վրէժս խնդրելով ի նոցանէ վասն կնոջն և որդւոցն՝ խորտակեաց զզօրութիւն նոցա և թափեաց ի նոցանէ զբազում ամուրս և զքաղաքս՝ զորս առեալ էր նախ դաւթի։ Եւ պաշարեալ զքաղաքն որդուվար՝ էառ և զայն. և կոտորեաց ի նմա զամենեսին ի մեծամեծաց մինչեւ ցըփոքրկունս. և էառ զամենայն աւար նոցա։ Եւ եկեալ ի բերդ մի՝ որ կոչիւր խնձորէզք, բնակեցաւ անդ աւուրս ինչ. իսկ ոմանք ի հայոց եղելոց անդ՝ ոխս ունելով ընդ նմա՝ հարին զնա հրացանիւ. և հատեալ զգլուխ նորա՝ տարան առ բդեշխն ի դավրէժ։ Զայն իբրեւ ետես բդեշխն, բորբոքեցաւ բարկութեամբ ի վերայ արանցն, և ասէ. ո՞րք անօրէնք՝ որդի՛ք կորստեան, զիա՞րդ իշխեցիք սպանանել ի զուր տարապարտուց զիշխան ձեր, և կորուսանել յերկրէ զայդպիսի այր զօրաւոր. և անդէն հրամայեաց հատանել զգլուխս նոցա։

*Այս բաղդատութիւններէն յետոյ սակայն կարեւոր բաղդատութիւն մը կայ ընելիք՝ մեր Վենետկեան աղբիւր—ձեռագիրներուն՝ Արգար Ստեփաննոսեան Գուլամիրեանցի հրատարակութեան հետ համեմատուած։ Վերջինս նորանոր փաստեր պիտի տայ մեզի նախ պատմող աղբիւրներու մասին, և յետոյ գրի առնողներուն։*

*Մեր ցարդ ըսածներէն ընական է պիտի հետեւի թէ Մխիթարեան Հայրերու գրի առած պատմութիւններն են որ Րաֆֆիի «Դաւիթ բէկ»ին աղբիւր ծառայած են. անշուշտ, այդ է հետեւութիւնը. և սակայն նկատելի կարեւոր պարագան այն է որ Րաֆֆի երբեք բախտը չէ ունեցած ո՛ և է կերպով տեսնելու կամ օգտուելու*